ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման մեթոդները ավագ դպրոցում

Ղեկավար՝ Կարեյան Ա.

Կատարող՝ Գրիգորյան Սիրանուշ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1 «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ……

1.1 10-րդ դասարանի բաղադրիչների ուսուցման մեթոդների կիրառումը……..

1.2 11-րդ դասարանի բաղադրիչների ուսուցման մեթոդների կիրառումը…….

1.3 12-րդ դասարանի բաղադրիչների ուսուցման մեթոդների կիրառումը…….

ԳԼՈՒԽ 2 «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ……

2.1 Մեթոդների կիրառման ու հետևանքների վերլուծությունը 10, 11 և 12-րդ դասարաններում……..

2.2 Մեթոդների գործնական կիրառման արդյունավետությունը ավագ դպրոցում..

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժությունը որպես գիտություն զբաղվում է սերունդների կրթության, դաստիարակության և զարգացման հիմնախնդիրներով:

Մեթոդը հունարեն (methodos) բառն է, որը թարգմանաբար նշանակում է ճշմարտությանը, սպասված արդյունքին հասնելու ուղի, ձև, եղանակ, միջոց, այլ կերպ ասած այն ըմբռնվում է իբրև գործունեության եղանակների ու հնարների համակարգ, որն ապահովում է տվյալ գործունեության արդյունավետ իրականացումը:

Որպես դպրոցում ուսուցանվող առարկա, հասարակագիտությունը ուսումնասիրում է մարդուն վերաբերող բոլոր հիմնական թեմաները՝ տալով ընդհանրական գիտելիք աշխարհի, մարդու, աշխարհի ու մարդու փոխհարաբերությունների մասին: Ավագ դպրոցում աշակերտները ուսումնասիրում են յոթ բաղադրիչ՝ գեղագիտություն, բարոյագիտություն, հոգեբանություն, տնտեսագիտություն, իրավագիտություն, քաղաքագիտություն ու փիլիսոփայություն: Հասարակագիտություն առարկան ուսումնասիրում է մարդուն, հետևաբար աշակերտներին առավել հետաքրքրական կլինի հենց իրենց ուսումնասիրել, սեփական անձը ճանաչել, առանձնացնել ուժեղ ու խոցելի կողմերը:

Թեմայի արդիականությունը: Այսօր՝ ամբողջ աշխարհում հասարակագիտությունը որպես մարդուն ուսումնասիրող առարկա կենտրոնական տեղ է գրավում: Այն արդիական է մարդուն հուզող բոլոր հասկացությունները ուսումնասիրելու տեսանկյունից: Պատահական չէ, որ բոլոր զարգացած երկրներում հասարակությունը ունի բարձր բարոյական, իրավական, պետական գիտակցություն: Իսկ որպես գիտություն հասարակագիտության ուսումնասիրման նպատակը լավ հասարակական, պետական քաղաքացի ձևավորելն է:

Առարկայի շրջանակում կիրառվող մեթոդները (բանավեճ, խմբային աշխատանքներ, Վենի դիագրամ, գործնական, ճանաչողական, ուսուցողական էքսկուրսիաները և այլն) հրաշալի եղանակ են թեմաները յուրացնելու համար: Ժամանակակից մեթոդների կիրառումը արդիական է մի շարք որակներ՝ քննադատական, ստեղծագործական, վերլուծական ու տրամաբանական մտածողությունը զարգացնելու համար: Թեման արդիական է այնքանով, որ առարկայի

շրջանակում կիրառվող մեթոդները զարգացնում են աշակերտների մոտ այնպիսի որակներ, որոնք անհրաժեշտ են հասարակական, քաղաքական էակ դաստիարակելու համար:

Թեմայի օբյեկտն ու առարկան: Հետազոտական աշխատանքի օբյեկտը ավագ դպրոցում հասարակագիտության շրջանակում կիրառվող մեթոդներն են: Առարկան այն հիմնական հասկացություններն են, որոնք անմիջականորեն վերաբերում են թեմային: Այդ հասկացություններն են՝ մեթոդ, հասարակագիտություն, մանկավարժություն և այլն:

Թեմայի նպատակն ու խնդիրները: Թեմայի նպատակն է ավագ դպրոցում հասարակագիտության շրջանակում ուսումնասիրվող մեթոդների կիրառությունը: Թեմայի նպատակին հասնելու համար պետք է լուծել հետևյալ խնդիրները՝

● ուսումնասիրել և ներկայացնել մեթոդ հասկացությունը, տեսակները

●ցույց տալը հասարակագիտություն առարկայի նշանակությունը ու դրա շրջանակում ուսումնասիրվող մեթոդների գործնական կիրառելիության հնարավորությունը,

● ներկայացնել ու վերլուծել 10, 11, 12-րդ դասարաններում կիրառվող մեթոդները

● վեր հանել ավագ դպրոցում ուսումնասիրվող մեթոդների ժամանակ առաջացող դժվարություններն ու առավելությունները

● վերլուծել կիրառվող մեթոդներն ու արդյունքները:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է Տիտղոսաթերթից, Բովանդակությունից, Ներածությունից, Երկու Գլուխներից, Եզրակացությունից ու Օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1 «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Արդի աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները իրենց ազդեցությունն են թողնում նաև կրթական համակարգի վրա: Մանկավարժությունը ամենաբարդ ճյուղերից մեկը լինելով չի կարող զերծ լինել նմանատիպ փոփոխություններից:

Մանկավարժությունը որպես գիտություն զբաղվում է սերունդների կրթության, դաստիարակության և զարգացման հիմնախնդիրներով: Կարելի է ասել՝ գիտություն է, որը հետազոտում է կրթության, դաստիարակության և զարգացման օրինաչափությունները: Մանկավարժության օբյեկտը կրթությունն է, որի միջոցով դպրոցականները տիրապետում են գիտությունների հիմունքներին, ձեռք են բերում գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ և դրանց հիման վրա ձևավորում իրենց հայացքները ու համոզմունքները, իդեալները, գիտական աշխարհայացքը, ստեղծագործական ընդունակությունները, բարոյական որակներն ու հասարակական վարքը[1]: Մանկավարժության խնդիրն է հետազոտել ու հայտնաբերել այն բոլոր ասպեկտները, որոնք կարող են խոչընդոտել կրթական բնականոն գործընթացը:

Ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: Այն ամբողջական համակարգ է: Դասը, որպես ուսուցման կազմակերպման հիմնական ձև, ընդգրկում է ուսումնադաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրամասերը. նպատակը, բովանդակությունը, միջոցները, մեթոդները, կառավարման գործունեությունը և նրա դիդակտիկական բոլոր տարրերը: Դասի ընթացքում ամբողջական կարգով և միասնության պայմաններում ծավալվում են ուսուցչի և աշակերտների փոխկապակցված, իրար հաջորդող ու փոփոխվող փոխազդեցությունները: Այդ ընթացքում սովորողները ձեռք են բերում գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, յուրացնում բարոյական որակներ:[2] Դասը իր մեջ ներառում է 3 բաղադրիչ՝

- ✓ Ինչ սովորեցնել
- ✓ Ինչու և ինչի համար սովորեցնել

[1]Տե՛ս, **Ց. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան,** Մանկավարժություն, մանկավարժ, 2005թ., էջ 9

[2]Տե՛ս, **Հ.Հ. Պետրոսյան,** Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները, Երևան, 2008թ., էջ 25

- ✓ Ինչպես սովորեցնել

Յուրաքանչյուրդասունիիրնպատակը, խնդիրները, կառուցվածքը, մեթոդները և ամբողջական բովանդակությունը:

Յուրաքանչյուրուսուցիչամենդասիցառաջկանգնումէկարևորխնդրիառաջ՝

- ✓ Ինչպես հաջող պլանավորել դասը
- ✓ Ինչպես հաջող իրականացնել դասը
- ✓ Ինչպես կանխատեսել արդյունքները
- ✓ Ինչպես հասնել նպատակներին
- ✓ Ինչպես վերլուծել հաջողությունները և բացթողումները

Դաս ավելի արդյունավետ դարձնելու գործում մեծ դեր են խաղում մեթոդները և դրանց ճիշտ ընտրությունը:

Ուսուցչի խնդիրն է ճիշտ կազմակերպել դասապրոցեսը, ճիշտ սահմանել նպատակը, համակարգել խնդիրների լուծման միջոցներն ու հնարները: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ճիշտ մեթոդների ընտրություն: Մեթոդը ուսումնական գործընթացի կարևոր մաս է, սրա ճիշտ ընտրության միջոցով է հնարավոր դասի յուրացումն ու հասկացումը: Մեթոդը (հունարեն methodos) թարգմանաբար նշանակում է (ճանաչողական կամ հետազոտական ճանապարհ, տեսություն): Մեթոդը կոնկրետ խնդրի լուծման ենթակա իրականության յուրացման գործնական կամ տեսական հնարների կամ գործողությունների համախումբ է[3]: Մեթոդն այլ կերպ աշակերտին դասը, թեման հասկացնելու միջոց է, հնար ու եղանակ, որի միջոցով հնարավոր է նույնիսկ բացատրել անհնարինը: Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և ժամանակակից մեթոդներ: Մեթոդ բառի նշանակության ու իմաստի մասին շատ մանկավարժներ ու մեթոդիստներ են խոսել: Մեթոդը հունարեն (methodos) բառն է, որը թարգմանաբար նշանակում է ճշմարտությանը, սպասված արդյունքին հասնելու ուղի, ձև, եղանակ, միջոց, այլ կերպ ասած այն ըմբռնվում է իբրև գործունեության եղանակների ու հնարների համակարգ, որն ապահովում է տվյալ գործունեության արդյունավետ իրականացումը[4]:

---

[3]Տե՛ս, **Պետրոսյան Հ. Հ.,** Ուսուցման Ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2008

[4] Տե՛ս, **Подласый А.П.,** “Педагогика” Учеб. для вузов 2 кн. т. I, М., 2002, стр. 187

Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Երբեմն ավանդական մեթոդը նմանեցվում է զուտ պատմելու կամ ընդամենը թեման վերարտադրելու հետ:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ժամանակակից մեթոդն այլ կերպ անվանում են «աշակերտակենտրոն» կրթություն, որտեղ աշակերտն է դասի կենտրոնում, իսկ ուսուցիչը պասիվ կողմն է: Ի տարբերություն ժամանակակից մեթոդի ավանդականը ուսուցչակենտրոն է, որտեղ աշակերտներն են պասիվ դիրքում: Պետք է մի կարևոր հանգամանք շեշտել, որ ժամանակակից կրթությունը ըդունում է աշակերտակենտոն կրթությունը, համարելով, որ աշակերտները չեն ձանձրանում, չեն հոգնում և դասն էլ սովորում են դպրոցում, այլ ոչ թե տանը: Տանը միայն կատարում են որոշ առաջադրանքներ, ու վերհիշում դպրոցում սովորածը:

Ուսուցիչը մանկավարժական որևէ տեխնոլոգիա կամ մեթոդ ընտրելիս նախ և առաջ պետք է հաշվի առնի այն դասարանի աշակերտների հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները, հետաքրքրությունների շրջանակը, ունակությունների մակարդակը:

Մանկավարժական տեխնոլոգիաները միտված են ոչ թե բարդացնել ուսուցման գործընթացը, այլ առավել դյուրին դարձնել այն: Ինչպես նաև ուսուցիչը այդ մեթոդներն ու տեխնոլոգիաները կիրառելիս պետք է հաշվի առնի, որ իր աշակերտների թվում կան այնպիսի աշակերտներ, որոնք իրենց հոգեբանամակավարժական վիճակով, ընդունակությունների մակարդակով տարբերվում են իրենց իսկ համադասարանցիների կրթական զարգացվածության մակարդակից և պետք է այնպես դյուրին կիրառել ընտրված մեթոդը, որի արդյունքում անցկացված դասը բոլոր աշակերտների համար լինի օգտակար:

«Հասարակագիտություն» բառը բաղկացած է հասարակություն և գիտություն բառերից, հետևաբար այն գիտություն է, որն ուսումնասիրում է հասարակությունը, դրա բոլոր ասպեկտները՝ սոցիալ-հոգեբանական, գեղագիտական, բարոյական,

տնտեսական, իրավական, քաղաքական ու ճանաչողական: Եթե ընդհանրացնենք կստացվի, որ հասարակագիտությունը ուսումնասիրում է մարդուն: Այն կարևոր է մարդուն որպես քաղաքացի դաստիարակելու՝ ձևավորելով գիտակցություն, ինքնագիտակցություն, իրավական ու քաղաքական գիտացություն: Ուսուցչի նպատակն է բազմազան մեթոդների միջոցով գիտելիքը աշակերտի համար դարձնել պարզ ու հասկանալի: Մեթոդները կամ մեթոդական հնարների կիրառումը չի կարող ինքնանպատակ լինել: Այսինքն՝ բուն նպատակը ոչ թե պարզապես դասն աշխուժացնելն է, այլ առաջին հերթին՝ մեթոդական ողջ զինանոցի կիրառմամբ հասնել ուսուցման նպատակների իրականացմանը: Այլ խոսքով ասած, պետք է ոչ թե «տեխնիկա ցուցադրել» այլ հասնել դասի՝ նախապես ծրագրված նպատակին:

1.1 10-րդ դասարանի բաղադրիչների ուսուցման մեթոդների կիրառումը

Հասարակագիտություն առարկան 10-րդ դասարանում բաղկացած է 4 բաղադրիչներից՝ գեղագիտություն, բարոյագիտություն, հոգեբանություն ու տնտեսագիտություն: Ամեն բաժին ունի իրեն համապատասխան մեթոդը: Օրինակ տնտեսագիտությունն ու հոգեբանությունը լրիվ տարբեր բաժիններ են, որը նշանակում է, որ դրանց մեջ կիրառվող մեթոդները ևս տարբեր կլինեն: Օրինակ տնտեսագիտության մեջ չենք կարող հոգեբանական զրույցի մեթոդը, կամ դիտումը կիրառել, ու ոչ էլ հոգեբանության մեջ մաթեմատիկական բանաձևեր:

Գեղագիտություն բաժնում նպատակահարմար է կիրառել խմբային աշխատանքներ, զրույց, բանավեճ, խորհրդավորություն, գուշակություն, զարմանք, անսպասելիություն, մեջբերումներ, գիտեմ/ուզում եմ իմանալ/սովորեցի(ԳՈՒՍ), մտագրոհ և այլ մեթոդներ:

10-րդ դասարանում կիրառվող և արդյունք տվող մեթոդներից մեկը զրույցի մեթոդն է: Զրույցի մեթոդի էությունը այն է, որ աշակերտը պատասխանում է նախօրոք կազմված հարցերին: Զրույց մեթոդի հիմնական գործառույթը մոտիվացիան է: Զրույցի մեթոդը նախնական պատկերացում կտա աշակերտներին թեմայի վերաբերյալ: Զրույցի մեթոդի օգնությամբ մենք խթանում ենք աշակերտների վերլուծական մտքի զարգացմանը: Մեթոդը ընտրելուց հաշվի ենք առել տարիքային առանձնահատկությունը: Զրույց մեթոդի հնարավորությունները և վտանգները կներկայացնենք աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 1. Զրույց մեթոդի հնարավորությունները և վտանգները

Հնարավորություն	**Վտանգներ**
Խթանում է վերլուծական մտքի զարգացմանը	Կարծիքների բախում
Հարցերի միջոցով կապի ստեղծում նախորդ թեմաների հետ	Դասաժամի արդյունավետ օգտագործում
Սեփական կարծիքի ձևավորում և արտահայտում	
Խոսքի մշակույթի զարգացում,	Հնարավոր

էթիկայի կանոնների պահպանում	անհանդուրժողականություն

Զրույցի մեթոդով աշակերտները պատկերացում կազմեցին խնդրի մասին: Այսինքն կա բավարար հիմք case study մեթոդը կիրառելու համար: Ինչպես նշեցինք արդեն մեթոդի նպատակն է ուսուցչի կողմից տրված տեղեկատվական նյութերի միջոցով կոնկրետ իրավիճակի վերլուծություն: Այս մեթոդում միակ որոշում գոյություն չունի, որովհետև իրավիճակների ներկայացման վերջում կարող է ընտրվել որոշման լավագույն տարբերակը: Այս մեթոդի արժեքը հենց իրավիճակի վերլուծության գործընթացն է, որոշումների որոնումը՝ առաջին հերթին կիրառելով ունակություններն ու հմտությունները, տեսական գիտելիքները:

Այժմ անդրադառնանք խմբային աշխատանք մեթոդին, որը առավել կիրառելի է 10-րդ դասարանի գրեթե բոլոր բաղադրիչներում: Օրինակ՝ «Գեղեցիկը տարբեր մշակութային միջավայրերում», «Գեղեցիկը արվեստի տարբեր բնագավառներում», «Բանկեր», «Խառնվածք» թեմաների շրջանակում: Այս մեթոդի շրջանակում աշակերտները պարտավոր են լինել միասնական, հարգել մեկը մյուսի կարծիքը, համատեղ ու հավասար չափով աշխատել: Այն ձևավորում է թիմում ճիշտ աշխատելու մշակույթ: Որպես կանոն այն իրականանում է մի քանի ձևով, կարող է սահիկաշարերի միջոցով կամ առանց դրա:

Աղյուսակ 2. Խմբային աշխատանք

Խմբեր	Դասի սկիզբ	Իմաստի ընկալում	Կշռադատում
Խումբ 1	Սահիկաշար	Տրամաբանական հարցեր	Բլից հարցեր
Խումբ 2	Սահիկաշար	Տրամաբանական հարցեր	Բլից հարցեր
Խումբ 3	Սահիկաշար	Տրամաբանական հարցեր	Բլից հարցեր

Խումբ 4	Սահիկաշար	Տրամաբանակա ն հարցեր	Բլից հարցեր

Առհասարակ խմբային աշխատանքները կարևոր են թիմում աշխատելու որակները զարգացնելու, իրար նկատմամբ հանդուրժող ու պատասխանատու լինելու համար: Հետաքրքիր ու արդյունավետ դասի ամփոփման մեթոդ է **Կիսատ նախադասություն** մեթոդը: Այս մեթոդի հարցադրումներն են՝

- Ես այսօր սովորեցի…
- Ինձ զարմացրեց…
- Այսօրվա դասի ամենաօգտակար բանը…
- Ինձ հետաքրքրեց…
- Այս դասի ժամանակ ինձ ամենաշատը դուր եկավ…
- Մի բան, որ չհասկացա…
- Մի բան, որ կուզեի ավելի իմանալ…
- Այս դասից հետո ես զգում եմ…
- Այս դսից ավելին կսովորեի, եթե[5]…

Այս հարցերը ուսուցիչը կարող է բոլորն էլ տալ կամ դրանցից մի քանիսը տալ:

10-րդ դասարանում կարելի է կիրառել բանավեճ, բայց ոչ թե ուղղակի կարծիքների բախումներ այլ հստակ պնդումներ, փաստեր ու փաստարկում: Բանավեճը ձևավորում է մի քանի հմտություններ, որոնցից են՝

- քննադատական ու վերլուծական մտածողություն
- էթիկայի կանոնների ձևավորում
- հռետորիկա
- թիմային աշխատանքի ձևավորում
- դիմացինին լսելու կարողություն
- հանդուրժողականություն

Բացի բուն դասապրոցեսի ընթացքում կիրառվող մեթոդներից արդյունավետ են նաև արտադպրոցական մեթոդները, ինչպես որևէ կառույց այցելությունը, կամ որևէ

[5] Տե՛ս **Խաչատրյան Ս.,** Ուսուցման արդյունավետ հնարներ, Եր., 2020, էջ 40

կառույցում դասախոսություն լսելը: Այս մեթոդները բավականին արդյունավետ են գործնական գիտելիքների մասով: Այսինքն բացի տեսական գիտելիքների ստացման գործընթացից կարևոր է նաև գործնական գիտելիքի տրամադրումը, որոնք նպաստում են աշակերտի մոտ մտածողությունը զարգացնելուն:

11-րդ դասարանի բաղադրիչների ուսուցման մեթոդների կիրառումը

Այսօր մի շարք մտածողներ հակված են այն մտքին, որ ուսուցման մեթոդը սովորողների ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման եղանակն է: Նրանց կարծիքով ուսուցչի խնդիրը սովորողներին ուսուցման գործընթաց ներգրավելն է, նրանց ակտիվ մասնակցության ապահովումը և ուսումնական գործունեության կազմակերպմանն աջակցելը: Այս մոտեցման հետևորդները որպես օրինակ բերում էին ինքնուրույն աշխատանքի մի քանի ձևեր, օրինակ՝ ստուգողական, թեստային աշխատանքները, համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը: Այս առումով Ս.Ա. Սմիռնովն ուսուցման մեթոդները բնութագրում է որպես «սովորողների ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպում նախապես սահմանված խնդիրներով, ճանաչողական գործունեության մակարդակներով, ուսումնական գործողություններով և դիդակտիկ նպատակներին հասնելու ակնկալվող արդյունքներով»[6]**:** Մանկավարժ-գիտնականների գերակշռող մեծամասնությունը կարևորում է ուսուցչի գործունեության (դասավանդում) և աշակերտի գործունեության (ուսումնառություն) սերտ փոխկապվածությունը՝ պնդելով, որ ուսուցման մեթոդները ուսուցչի և աշակերտի՝ ուսուցման նպատակներին հասնելու համատեղ գործունեության եղանակ են: Ըստ Յու.Կ. Բաբանսկու՝ ուսուցման մեթոդները դասավանդողի և սովորողի կանոնակարգված, փոխկապակցված գործունեության եղանակ են՝ ուղղված կրթության խնդիրների լուծմանը: Նմանօրինակ սահմանում են ներկայացրել նաև Պ.Ի.Պիդկասիստին, Ն.Վ.Սավինը[7]:

Դասավանդողի կողմից ընտրության ժամանակ շատ կարևոր է նպատակադրումը՝ այսինքն ինչ նպատակի համար և ինչ արդյունք ստանալու համար է իրագործվում

[6]Տե՛ս **Смирнов С.А.** (ред.) Педагогика. Педагогические теории, системы технологии, М.: Академия, 2000թ., стр. 18

[7] Տե՛ս **Գ. Ղությունչյան,** Մանկավարժություն, 1-ին գիրք, Եր., 2005թ., էջ 175

ծրագիրը: Նպատակից է կախված ընտրվող տեխնոլոգիայի բնույթը[8]:

11-րդ դասարաններում կիրառվող մեթոդներ են՝ բանավեճը, խմբային աշխատանքը, Ֆրայերի մոդելը, Վենի դիագրամը, Միլլերի աստիճանակարգումը, ԳՈՒՍ, մտագրոհ, Մ-աձև աղյուսակ, Տ-աձև աղյուսակ և այլն: Իրավագիտություն բաժնում օգտակար է իրավական կայքերին ծանոթությունը համացանցի միջոցով, օրենսգրքերից կարդալ թեմաների վերաբերյալ առաջադրանքներն ու կատարել դրանց համապատասխան տրամաբանական առաջադրանքներ:

Ըստ Յու.Կ. Բաբանսկու՝ ուսուցման մեթոդները դասավանդողի և սովորողի կանոնակարգված, փոխկապակցված գործունեության եղանակ են՝ ուղղված կրթության խնդիրների լուծմանը: Նմանօրինակ սահմանում են ներկայացրել նաև Պ.Ի.Պիդկասիստին, Ն.Վ.Սավինը[9]: Հետևաբար ճիշտ մեթոդների կիրառությունը կօգնեն ուսուցիչներին ավելի հեշտ կարգավորել դասապրոցեսը, և այն ոչ թե դարձնել ձանձրալի այլ հակառակը: Այդ իսկ պատճառով պետք է ճիշտ ընտրել դասարանը, թեման ու մեթոդը: Օրինակ քաղաքական թեմաներով քննարկումները նպատակահարմար են բանավեճի մեթոդով կամ խմբային ու գործնական աշխատանքներով, Վենի դիագրամով: Վենի դիագրամը հնարավորություն է տալիս թեմաները խորապես ուսումնասիրել ու վեր հանել երկու հասկացությունների տարբերություններն ու նմանությունները: Յուրաքանչյուր մեթոդում կարելի է առանձնացնել բազմաթիվ հնարներ: Ուրեմն, մեթոդը հնարների միագումար ամբողջությունն է: Ուսուցման գործընթացում մեթոդին կարող է փոխարինել հնարը, հնարին՝ մեթոդը: Դա կախում ունի ուսումնասիրվող նյութի բովանդակությունից, տրամաբանությունից, սովորողների ռեալ ուսումնական ու տարիքային հնարավորություններից և այլ հանգամանքներից: Ուսուցման մեթոդների ու հնարների հիմնական խնդիրն է միասնաբար լուծել սովորողների կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրները:

Բացի մեթոդից ու հնարից, ուսուցման գործընթացում կիրառվում է նաև ուսուցման միոցը: Մեթոդը, հնարը և միջոցը փոխկապակցված են: Դա էլ հենց նրանց

[8]Տե՛ս, **Щуркова Н. Е.**, и др., Новые технологии воспитательного процесса, Москва, 1993, стр. 133

[9] Տե՛ս **Գ. Ղույումչյան**, Մանկավարժություն, 1-ին գիրք, Եր., 2005թ., էջ 175

դիալեկտիկական կողմն է[10]: Ուսուցման միջոցներ կարող են համարվել ուսումնական առարկաները, դասագրքերը, ձեռնարկները, դիտազննական պարագաները, ուսուցման տեխնիկական միջոցները և այլն: Օրինակ պետական իշխանության բաժանումը թեմայի շրջանակում Ազգային ժողովում այց կատարելը բացի ճանաչողական լինելուց նաև զննական ու դիտազննական է: Շատ հաճախ աշակերտներն իրենք են ներկա գտնվում ԱԺ նիստերին ու զննում, քննարկում ու վերլուծում վերջիններիս գործունեության ուժեղ ու թույլ կողմերը:

Դասավանդողի կողմից ընտրության ժամանակ շատ կարևոր է նպատակադրումը՝ այսինքն ինչ նպատակի համար և ինչ արդյունք ստանալու համար է իրագործվում ծրագիրը: Նպատակից է կախված ընտրվող տեխնոլոգիայի բնույթը[11]:

Ե. Գոլանդը, Ս.Պերովսկին ուսուցման մեթոդները դասակարգել են երեք խմբերում՝ խոսքային, զննական և գործնական[12]: Վերջիններս, ուսուցման մեթոդները դասակարգելիս, հիմք են ընդունել ինֆորմացիայի ըմբռնման բնույթը: Հարկ է նկատել, որ Ե.Գոլանդը, հումանիտար առարկաների դասավանդման մեթոդների դասակարգման հիմքում շեշտադրելով սովորողների ակտիվության աստիճանը, ներկայացրեց պասիվ և ակտիվ մեթոդներ: Պասիվ մեթոդների կիրառման դեպքում սովորողներն ընկալում, յուրացնում են միայն պատրաստի տեղեկույթը (պատմել, զրույց, ուսուցչի կողմից զննական պարագաների ցուցադրում), իսկ ակտիվ մեթոդների միջոցով խթանվում է սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը (գործնական փորձեր, աշխատանք դասագրքով, լրացուցիչ պատմվածքների, նյութերի ներկայացում և այլն):

Այս մոտեցումը զարգացրին Մ.Ն.Սկատկինը և Ի.Յա.Լերները: Վերջիններս հիմք ընդունելով կրթության բովանդակության յուրացման մեջ սովորողների իմացական հնարավոր բնույթը՝ առաջարկել են մեթոդները դասակարգել ըստ ստեղծագործական արդյունավետ գործունեության մեջ սովորողների ներգրավվածության և ճանաչողական գործունեության մակարդակի: Այս մոտեցման համապատասխան՝ նշված գիտնականներն առանձնացրել ենհետևյալ մեթոդները՝

- բացատրական-պատկերավոր (զննական),

[10] Տե՛ս **Беспалько В. П.,** Слагаемые педагогической технологии, М.: Педагогика, 1989, стр. 36
[11]Տե՛ս **Щуркова Н. Е**. и др., Новые технологии воспитательного процесса, Москва, 1993, стр. 131-133
[12]Տե՛ս **Գ. Ղույումչյան,** Մանկավարժություն, 1-ին, 2-րդ գիրք, Եր., 2005, էջ 239

- վերարտադրողական,
- նյութի պրոբլեմային շարադրանքի,
- մասնակի որոնողական կամ էվրիստիկական և հետազոտական[13]:

Մ.Ա. Դանիլովը և Բ.Պ. Եսիպովը, ելնելով ժամանակակից դիդակտիկայի խնդիրներից, ուսուցման մեթոդները դասակարգել են հետևյալ խմբերի՝ նոր գիտելիքներ ձեռք բերող մեթոդներ, կարողություններ, հմտություններ մշակող մեթոդներ, ստեղծագործական գործունեությունը ձևավորող մեթոդներ, գիտելիքները, կարողություններն ու հմտությունները ամրակայող, վերահսկող և ստուգող մեթոդներ[14]:

Մ.Ի.Մախմուտովն առաջարկում է ուսուցման մեթոդների դասակարգման հետևյալ համակարգը. ինֆորմացիոն ընդհանրացնող և կատարողական, բացատրական և վերարտադրողական, հրահնգչական-գործնական, բացատրական խթանող և մասնակի որոնողական, խթանող և որոնողական[15:] Ուսուցման մեթոդների դասակագման վերաբերյալ ավելի ամբողջական մոտեցում է ցուցաբերել Յու.Կ.Բաբանսկին: Բաբանսկին համոզված էր, որ ցանկացած գործունեություն ունի երեք բաղկացուցիչ՝ կազմակերպում, խթանում և վերահսկում: Ըստ այդմ նա ընդհանրացրել է ուսուցման մեթոդների վերաբերյալ պատկերացումները, տեսակետներն ու այլ հանգամանքներ և ուսուցման մեթոդները դասակարգել հետևյալ խմբերում.

1. ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպման,
2. ուսումնաճանաչողական գործունեության խթանման,
3. ուսումնաճանաչողական գործունեության արդյունավետության վերահսկման:
4. սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման՝ նոր գիտելիքներ, կարողություններ, հմտություններ ձեռք բերելու, ինքնուրույն աշխատանքի[16]:

Իրավագիտության դասավանդման գործողությունների կազմակերպման և իրագործման, ուսումնական գործընթացի ինքնակառավարման, ուսուցման խթանման և դրդապատճառների ձևավորման, վերահսկողության և ինքնավերահսկողության նկատառումներից ելնելով՝ կարևոր դերակատարում ունեն

---

[13] Տե՛ս **Л. П. Крившенко,** Педагогика, учебник, Москва 2005, стр. 187

[14] Տե՛ս, Подласый А.П., “Педагогика” Учеб. для вузов 2 кн. т. I, М., 2002, стр. 209

[15] Տե՛ս, Յու. Ա.Ամիրջանյան, Ա.Ա.Սահակյան, Մանկավարժություն, Եր., 2004, էջ 159

[16] Տե՛ս, Բաբանսկի Յու. Կ., Մանկավարժություն, 2-րդ մաս, Երևան, Լույս, 1987, էջ 128

ուսուցման խոսքային մեթոդները: Ուսուցման խոսքային մեթոդների թվին են պատկանում պատմելը, դասախոսությունը, զրույցը, ուսումնական բանավեճը և այլն: Այս մեթոդները կիրառելիս ուսուցիչը խոսքի միջոցով շարադրում է, բացատրում է ուսումնական նյութը, իսկ աշակերտն ըմբռնում է ու յուրացնում՝ լսելու, մտապահելու ու իմաստավորելու միջոցով:

Պատմելու մեթոդը որոշ վերապահումներով, կարելի է ասել, կիրառվում է կրթության բոլոր հատվածներում: Պատմելը սկսվում է ներածությունով և ավարտվում ամփոփումով: Ներածական խոսքում ուսուցիչը հաղորդում է ուսումնասիրվող նյութի թեման, այն կապում նախորդ թեմայի հետ, նշում թեմայի նշանակությունը, կարևորությունը, ուսումնասիրության նպատակը: Ձևավորում է ուսումնասիրվող թեմայի գլխավոր հասկացությունը, սովորողներին հիշեցնում, թե ինչ են յուրացրել նախորդ թեմաներից: Ավարտելով ներածական խոսքը՝ դասավանդողը շարադրում կամ պատմում է ուսումնական նյութի բովանդակությունը, խստագույնս պահպանելով համակարգվածության և հաջորդականության սկզբունքը[17]:

Իրավագիտության դասավանդման և ուսուցման գործընթացում դասավանդողը պատմելու ընթացքում առանձնացնում է նյութի գլխավոր տարրերը՝ հիմնավորելով իր հաղորդած գիտելիքները օրինակներով և գիտական փաստերով: Պատմելու մեթոդը կիրառելիս՝ դասավանդողը ժամանակ առ ժամանակ ընդհատում է իր շարադրանքը, աշակերտներին մասնակից դարձնում նոր նյութի հաղորդմանը, ակտիվացնում նրանց ճանաչողական գործունեությունը:

Ուսումնական նյութի շարադրանքն ավարտելուց հետո ուսուցիչն ամփոփում է իր պատմածները, առանձնացնում նյութի գլխավոր մտքերը, հասկացությունները, հիմնական փաստերը:

Պատմելու մեթոդի գործադրման արդյունավետությունը նկատի ունի ուսումնական նյութի բազմակողմանի յուրացում զննական պարագաների, տեխնիկական միջոցների ճիշտ ընտրություն և դասի ճիշտ կահավորում, ուսուցման այլ մեթոդների հետ զուգորդում:

---

[17]Տե՛ս **Ասատրյան Լ.Թ.,** Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Զ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017, 137 էջ

Դասի ժամանակն ուսուցչի կենդանի խոսքն անհրաժեշտ է հատկապես այն ժամանակ, երբ ուսումնասիրվում են դժվար յուրացվող նյութեր: Հարկ ենք համարում նշել, որ խոսքային մեթոդները միշտ ունեցել են և այսօր էլ ունեն կարևոր գործնական նշանակություն, քանի որ ամբողջ տեղեկատվությունը լսարանին հաղորդվում է խոսքի միջոցով:

Միաժամանակ, խոսքն ակտիվացնում է անձի երևակայությունը, հիշողությունը՝ ընձեռնելով հնարավորություն կարճ ժամանակամիջոցում հաղորդել մեծ ծավալի նյութ:

Զրույցի մեթոդի կիրառման դեպքում ուսուցիչը նախապատրաստում է հարցեր, որոնց պատասխանում են աշակերտները: Այս դեպքում կարևոր է, որ հարցերն ընդգրկեն հիմնական նյութը և լինեն մատչելի:

Մանկավարժության մեջ զրույցի մեթոդը հայտնի է Հին Հունաստանից: Մասնավորապես այս մեթոդը առաջինը կիրառել է Սոկրատեսը և այստեղից էլ ստացել է «սոկրատեսյան զրույցներ» անվանումը:

Զրույցի մեթոդի այն մեթոդն է, որի ժամանակ սովորողները պատասխանում են դասավանդողի հարցերին, իսկ վերջում կատարվում է ամփոփում: Զրույցում թույլ տրված սխալներն ուղղելով՝ ուսուցիչը հանգեցնում է ճիշտ ձևակերպումների: Զրույցը՝ որպես ուսուցման մեթոդ, խթանում է սովորողների մտածողական ակտիվությունը, զարգացնում նախաձեռնությունը:

Զրույցի մեթոդը կիրառելիս դասավանդողը պետք է առաջնորդվի մանկավարժական մի շարք պահանջներով.

1. զրույցի հարցերը պետք է լինեն տարողունակ և ընդգրկեն ուսումնական նյութի բովանդակությունը,
2. զրույցի հարցերը պետք է աստիճանաբար բարդացնել, հակառակ դեպքում կխախտվեն նյութի տրամաբանական, կուռ և հաջորդական կապերը,
3. զրույցը պետք է այնպես կազմակերպել, որ սովորողները իմաստավորեն, խորացնեն ինչպես հին, այնպես էլ նոր գիտելիքները,
4. զրույցի հարցերին ճիշտ պատասխանելու դեպքում ուսուցիչը կարող է տալ լրացուցիչ կամ ուղեկցող հարցեր, սովորողների հայտնած կարծիքները, մտքերը քննարկման դնել և այլն:

Զրույցի մեթոդն ունի մի շարք առավելություններ: Մասնավորապես, այն զարգացնում է սովորողների բանականությունը, ակտիվացնում է նրանց հետաքրքրությունները, զարգացնում է նրանց խոսքի կուլտուրան, հիշողությունը, մտապահումը, ինչպես նաև սովորողների յուրացրած գիտելիքները դարձնում է հայտնագործործակլսն և ավելի կիրառական:

Ուսումնական բանավեճը նույնպես խոսքային մեթոդներից է: Այն կազմակերպվում է միջին և բարձր դասարաններում և կարևոր նշանակություն ունի սովորողների իմացական հետաքրքրությունները բորբոքելու համար: Բանավեճը աշակերտների կարծիքները, համոզմունքները, տեսակետները հայտնելու, հարցապնդումներ անելու, ճշմարտությունն ի հայտ բերելու կարևոր մեթոդ է: Բանավեճը սովորողներից պահանջում է ճիշտ ձևակերպել իրենց մտքերը, համբերատար լսել ընկերների պատասխանները, կարծիքները, հարցապնդումները, հակադրվելու դեպքում բացառել վիրավորանքը, ունենալ խոսքի կուլտուրա, լինել նրբազգաց, հարգանքով ուղղել այլոց սխալները:

Դասախոսությունը ևս խոսքային մեթոդների խմբին է դասվում: Դասախոսությունն առաջացել է լատիներեն «լեկցիա» բառից և թարգմանաբար նշանակում է կարդալ: Այս մեթոդը կիրառվում է հանրակրթության բարձր դասարաններում և բուհական կրթության գործընթացում, երբ ծավալուն ուսումնական նյութերը շարադրում են բանավոր:

Դասախոսությունը գործադրվում է նաև շատ բարդ, դժվարին ուսումնական նյութերը ուսումնասիրելիս, մանավանդ, եթե այն ընդգրկում է պրոբլեմներ և ունի շատ ցայտուն տրամաբանական կառուցվածք ու պահանջում է կատարել ընդհանրացումներ, ենթադրում է ապացուցումներ, հիմնավորումներ և այլն:

Այս մեթոդը պատմելուց տարբերվում է իր ծավալով, զբաղեցնում է ամբողջ դասը, իսկ պատմելը նրա մի մասն է: Այստեղ կարևոր են մտքերի շարադրման մատչելիությունը, պարզությունը և հաջորդականությունը:

Որոշ գիտնականներ՝ Կաիրովը, Շիմբիրյովը, գտնում են, որ դասախոսությունը պատմելու մեթոդից տարբերվում է նրանով, որ ամբողջ դասի ընթացքում չի

ընդհատվում[18]: Իսկ Մ. Դանիլովը Բ. Եսիպովը պնդում են, որ դասախոսությունը պատմելու մեթոդից տարբերվում է իր գիտական բնույթով[19]: Սակայն հարկ է նկատել, որ նշված պնդումները վիճահարուց են, որովհետև պատմելու մեթոդին նույնպես բնորոշ է չունի գիտական բնույթ: Բացի դա դասախոսությունը կարելի է ընդհատել և այդ ընթացքում լսել սովորողների այս կամ այն հարցի վերաբերյալ կարծիքները տեսակետները, խորհրդածությունները, ինչպես այդ արվում է պատմելու մեթոդի կիրառման ընթացքում:

Դասախոսության ընթացքում օգտագործվում են դիտազննական պարագաներ, ուսուցման տեխնիկական միջոցներ: Դասախոսությունը տարվում է դանդաղ, որպեսզի սովորողները կարողանան գրառումներ կատարել: Դասախոսության արդյունավետությունը ենթադրում է դասախոսության պլանի հստակորեն կազմում, հարցերի տրամաբանական կապերի պահպանում, դիտազննական պարագաների, ուսուցման տեխնիկական միջոցների ճիշտ ընտրություն և այլն:

Անվանի հոգեբաններ Դ.Բ. Էլկոնինը և Վ.Վ.Դավիդովը ապացուցել են. որ մեթոդի «դեդուկտիվ» միջոցով կարելի է լրիվ չափով օգտագործել սովորողների մտավոր ներուժը[20]: Դավիդովը և Էլկոնինը գտնում են. որ համընդհանուր կապերը կարելի է արտահայտել մոդելի ձևով: Օրինակ՝ բանաձևի գրաֆիկական սխեմաների և այլնի, ու սովորողներին ուսուցանել այդ մոդելների օգտագործման եղանակները: Ուսուցման գործընթացն այս ձևով կազմակերպելը հնարավորություն է ընձեռում յուրացնել ընդհանուր և վերացական բնույթի գիտելիքներ և դրանցից դուրս բերել ավելի կոնկրետ բնույթի գիտելիքներ:

Բացի ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդներից, որոնց էությունը բացահայտվեց, ճանաչողական ակտիվությունն ու ստեղծագործական գործունեությունը զարգացնող մեթոդների թվին կարելի է դասել նաև պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական կամ էվրիստիկական, հետազոտական և այլ մեթոդներ:

Իրավագիտության ուսուցման արդյունավետությունը ապահովող մեթոդներից է մասնակի որոնողական կամ էվրիստիկական մեթոդը:

---

[18]Տե՛ս, **Յու. Ա. Ամիրջանյան**, Ա. Ա. Սահակյան, «Մանկավարժություն», եր., 2004, էջ 168
[19]Տե՛ս, **Подласый А.П.**, “Педагогика” Учеб. для вузов 2 кн. т. I, М., 2002, стр. 204
[20]Տե՛ս **Зимняя И. А.** Педагогическая психология.–2002, էջ 87

Մ Ն. Սկատկինը և Ի. Յա. Լերները այս մեթոդի առավելությունն են համարում այն, երբ առաջադրված պրոբլեմը մասնատվում է, յուրաքանչյուր մասի ուղղությամբ կատարվում են որոնումներ[21]: Այսպիսի գործունեությունը հեշտացնում է հիմնական կամ գլխավոր խնդրի լուծումը: Բացի դա, էվրիստիկական զրույցը բաղկացած է իրար հաջորդող հարցերից, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է մեկ քայլ գլխավոր կամ հիմնական խնդրի լուծման ճանապարհին:

Քննարկվող մեթոդը կիրառելիս սովորողներն ընկալում են հիմնախնդիրը, իմաստավորում նրա լուծման պայմանները, լուծում են դրա մի մասը հրատապ դարձնելով առկա գիտելիքները:

Հետազոտական մեթոդը սովորողների ստեղծագործական փորձի լիարժեք յուրացման կարևոր միջոց է, որը դրսևորվում է կայուն փուլերով: Դրանց շարքին կարելի է դասել երևույթների ու փաստերի դիտարկումը, անհասկանալի երևույթների պարզաբանումը, վարկածի առաջ քաշումը, հետազոտական պլանի իրացումը, հիմնուսխնդրի լուծման բանաձևումը և բացատրությունը, լուծված հիմնախնդրի արդյունքների ստուգումը[22]:

Դատախաղը՝ որպես իրավագիտության դասավանդման (փոխներգործուն) ինտերակտիվ մեթոդ: Դատախաղերը ներառում են ուսումնական օրինակներ կամ հիփոթետիկ իրավիճակներ, որտեղ մասնակիցներից պահանջվում է փաստարկել բողոքարկումը՝ իրավունքի տեսանկյունից: Դատախաղերը տարբերվում են իրական դատավարություններից, քանի որ այստեղ չկան վկաների, մեղադրյալների կամ փորձագետների հարցաքննություններ: Հարցաքննությունը պետք է տեղի ունենա դատավարության փուլում:

Իրավագիտության դասվանդման շրջանակներում մասնակիցները դատախաղերի ժամանակ նախապատրաստում են փաստարկներ փոքր խմբերում, ինչպես դա երբեմն տեղի է ունենում ուսումնական օրինակների դեպքում, իսկ, այնուհետև, նրանք ընտրում

[21]Տե՛ս **Գ. Ղույումչյան**, Մանկավարժություն, 1-ին, 2-րդ գիրք, Եր., 2005, էջ 126

[22]Տե՛ս **Ասատրյան Լ.Թ.,** Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Զ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017, 360 էջ:

են իրենց ներկայացուցչին՝ խմբի անունից փաստարկները և վերլուծությունները ներկայացնելու համար[23]:

Իրավագիտության ուսուցման ինտերակտիվ արդյունավետ մեթոդ է նաև փոքր դատախաղը, որտեղ մասնակիցները բաժանվում են եռյակների՝ յուրաքանչյուր կողմում մեկ իրավաբան և մեկ դատավոր կազմով: Վերջինս պետք է վարի դատավարությունը, որոշում կայացնի և արդյունքների մասին զեկուցի մյուս բոլոր մասնակիցներին:

Դատախաղերի կիրառման համար կարող են օգտագործվել ուսումնական օրինակների համար ներկայացված ընթացակարգը: Ուսումնական օրինակներն օգտագործելիս, սովորաբար, մասնակիցները բաժանվում են իրավաբանների երեք մեծ խմբի, որոնք ներկայացնում են հայցվորի և պատասխանողի (տուժողի և մեղադրյալի) շահերը և դատավորներին: Այնուհետև, մեծ խմբերը բաժանվում են ավելի փոքրերի՝ քննարկելու համար կիրառելի փաստարկներն ու լուծումները: Յուրաքանչյուր խմբի մասնակից կարող է ընտրվել՝ որպես խմբի անունից փաստարկներ կամ դատական որոշում ներկայացնող: Ներկայացման տարբերակները կարող են լինել տարբեր. մեկ կամ մի քանի խումբ կարող է փաստարկներ ներկայացնել մի կողմի համար, մեկ կամ մի քանի խումբ՝ մյուս կողմի համար, և երրորդ խումբը կամ մի քանի խումբը կարող են ներկայացնել դատական որոշումը փաստարկների վերաբերյալ:

Այս մեթոդը կիրառելիս՝ դասավանդողը պետք է նախօրոք տրամադրի դատավարության նյութերը մասնակիցներին, նշանակի դատավարության մասնակիցներին դատավարության մեջ տարբեր դերերի համար, նախապատրաստի մասնակիցներին դատավորությանը:

Մտքի գրոհը՝ որպես իրավագիտության դասավանդման (փոխներգործուն) ինտերակտիվ մեթոդ: Մտքի գրոհը մասնակիցների գաղափարների ազատ արտահայտումը խթանելու միջոց է: Այն ուսուցման կարևոր եղանակ է, քանի որ խրախուսում է մասնակիցներին նոր գաղափարներ արտահայտել՝ առանց քննադատության ենթարկվելու վախի: Մտքի գրոհի ընթացքում դասավանդողն առաջարկում է մասնակիցներին հնարավորինս շատ մտքեր արտահայտել՝ այդ մտքերի

[23] **Տե՛ս, Ամիրջանյան Յու.Ա., ՍահակյանԱ.Ս.,** Մանկավարժություն, Եր.:Մանկավարժ, 2005, էջ 57:

վերաբերյալ գրառումներ կատարելով գրատախտակի վրա[24]:

Իրավագիտություն ու քաղաքագիտություն բաժինները ուսումնասիրող մեթոդները բազմաթիվ են:

12-րդ դասարանի բաղադրիչների ուսուցման մեթոդների կիրառումը

12-րդ դասարանում հասարակագիտություն բաժինը վերաբերում է փիլիսոփայությանը: Փիլիսոփայության բաժնում կիրառվող մեթոդները կարող են զրույցի խաղերի, բանավեճի, մտագրոհի, ՈՒԴԱԿ աստիճակարգում և այլն: ՈՒԴԱԿ աստիճակարգումը մշակվել է Ջոն Բիգսի և Քևին Քոլիսի կողմից, որի միջոցով սովորողները նյութը յուրացնում են 5 մակարդակով: Սա ցույց է տալիս գիտելիքի յուրացման ընթացքը մինչև նյութի ամփոփում:

ՈՒԴԱԿ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳ

Գիտելիքի մակարդակը	**Նկարագրությունը**
1.Չկապակցված Այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. «Ես չեմ հասկանում»:	Սովորողն ունի չկապակցված տեղեկատվություն նյութի մասին, որն իմաստալից չէ:
2.Միակապ Այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. «Ես որոշ բաներ հասկանում եմ»:	Սովորողը բազմաթիվ կապեր է հաստատում, բայց դեռևս չի նկատում մեծ պատկերը:
3.Բազմակապ Այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. «Ես բավականաչափ հասկանում եմ այս թեման»:	Սովորողը բազմաթիվ կապեր է հաստատում, բայց դեռևս չի նկատում մեծ պատկերը:

[24]Տե՛ս **Ամիրջանյան Յու.Ա., ՍահակյանԱ.Ս., Մանկավարժություն**, նշվ. աշխ., էջ 70

4.Ամբողջացված Այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. «Ես կարող եմ կապակցել իմ ունեցած գիտելիքները գաղափարի հետ»:	Սովորողը տեսնում է մասերի և ամբողջի կապը:
5.Ընդլայնված Այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. «Ես ունեմ մի քանի գաղափար, որոնք կարող եմ կապակցել մեծ գաղափարի հետ և տեսնել նորովի»:	Սովորողը ոչ միայն տեսնում է ամբողջը, այլև կարողանում է այն տարածել այլ տիրույթի վրա:

Այս մեթոդը արդյունավետ է մանավանդ փիլիսոփայության իմացաբանություն, գոյաբանություն թեմաները քննարկելիս: Իսկ ինչպե՞ս պետք է այն կիրառել:

Մակարդակ 1	Առաջադրանք
2. Միակապ	Գրե՛ք մեկ փաստ թեմայի վերաբերյալ:
3. Բազմակապ	Փակցրե՛ք Ձեր գրած մեկ փաստը գրատախտակին և ընթերցե՛ք Ձեր դասընկերների կողմից գրվածները:
4. Ամբողջացված	Գտե՛ք ընդհանրություն գրատախտակին փակցված տեսակետներից մի քանիսի միջև:
5.Ընդլայնված	Մեկ պարբերությամբ շարունակե՛ք հետևյալ նախադասությունը. «Այս ամենն ինձ հիշեցրեց…» կամ՝ «Այս ամենը կիրառելի է նաև…»[25]:

Այժմ անդրադառնանք Բլումի և Անդերսոնի տաքսոնոմիաներին: Ի տարբերություն ՈՒԴԱԿ աստիճանակարգման, որը համադրական է, Բլումի-Անդերսոնի մոտեցումը վերլուծական է: Երկուսն էլ կարևոր են դասապրոցեսում: ՈՒԴԱԿ-ը կարելի է օգտագործել մասերից ամբողջը գնալու նպատակով, իսկ Բլում-Անդերսոնը՝ ամբողջից մասերը գնալու նպատակով: Նա «գիտելիքը» փոխարինեց «հիշել» բայով: Իսկ

[25] **Խաչատրյան Ս.,** Ուսուցման արդյունավետ հնարներ, Եր., 2020, էջ 54

«համադրության» փոխարեն առաջարկեց «ստեղծել» շատ կարևոր նպատակը:

Բլումի և Անդերսոնի տաքսոնոմիաները

Գիտելիք	**Հիշել**
Ըմբռնում	**Ըմբռնել**
Կիրառում	**Կիրառել**
Վերլուծություն	**Վերլուծել**
Համադրում	**Արժևորել**
Արժևորում	**Ստեղծել**

20-րդ դարի կեսերին ձևակերպված այս աստիճանակարգումը նպատակ ուներ սահմանելու կրթության բազմազան նպատակները՝ նշելով, որ ուսուցման գործընթացում կարևոր է ոչ միայն գիտելիքը, այլև՝ ըմբռնումը, կիրառումը, վերլուծությունը, համադրումը և արժևորումը: 2001թ.-ին Բլումի աշակերտ Անդերսոնը մասնակի փոփոխություն կատարեց աստիճանակարգման նախնական տարբերակում՝ այն դարձնելով ավելի տրամաբանված[26]:

Այս մեթոդների առավելությունը յն է, որ աշակերտներին տալիս է մտածելու հնարավորություն, իմացած գիտելիքը արժևորելու, հասկանալու, գնահատելու հհամար: Կրթություն չի նշանակում միայն ինչ-որ բան իմանալ, այն նշանակում է իմացածի մասին մտածել, խորհել, պատկերացնել:

Միլլերի աստիճանակարգումը Հայաստանում մեծ տարածում չունի: Բայց այն շատ կարևոր է գիտելիքը վարքագիծ դարձնելու առումով: Առաջին մակարդակում սովորողը պարզապես գիտի: Գիտենալը ուսուցման հիմքն է: Բայց սա բավարար չէ: Կարևոր է գիտելիքը օպերացիոն դարձնելը: Այս առումով երկրորդ մակարդակում սովորողը պետք է գիտելիքը գործողության մեջ դնի և իմանա՝ ինչպե՞ս, այսինքն՝ հասկանա: Երրորդ մակարդակում սովորողը պետք է կարողանա ցույց տալ՝ ինչպե՞ս: Վերջապես չորրորդ մակարդակում պետք է կարողանա կիրառել: Եթե ուսուցման գործընթացում սովորողն անցնի չորս փուլերով, ապա կարելի է ասել, որ նա լիարժեք սովորել է նյութը:

[26] **Խաչատրյան Ս.,** նշվ. աշխ., էջ 54-55

Հաճախ թույլ տրվող սխալներից մեկն այն է, որ ուսուցիչները միանգամից աշակերտներին մղում են ինքնուրույն աշխատանքի կամ հակառակը՝ երբեք չեն հասնում ինքնուրույն աշխատանքի փուլին: Ըստ ստորև ներկայացվող 59 գծագրի՝ ուսուցումը բաժանվում է չորս փուլի: Առաջին փուլը կառուցվածքային փուլն է: Այս փուլում ուսուցումը ուսուցչակենտրոն է, քանի որ աշակերտները դեռևս գիտելիքներ չունեն թեմայի վերաբերյալ և ուսուցիչն է պլանավորում գործընթացը: Պատկերավոր ասած՝ աշակերտները ամուր բռնված են լողավազանի պատից և կատարում են ուսուցչի հրահանգները: Երկրորդ փուլում ուսուցչի դերը նվազում, իսկ աշակերտների ինքնուրույն գործողությունների ծավալն աճում է: Այս փուլում աշակերտներն արդեն ինքնուրույն տեղաշարժվում են լողավազանում, բայց ուսուցիչը դեռևս վերահսկում է գործընթացը: Երրորդ փուլում ուսուցիչն արդեն միայն ուղղորդող է, և անցում է կատարվում ուսուցման աշակերտակենտրոն փուլին: Չորրորդ փուլում աշակերտները լիարժեք ինքնուրույն սովորողներ են, իսկ ուսուցիչը պարզապես հետևում է նրանց և անհրաժեշտության դեպքում աջակցում աշակերտներին[27]:

ԳԼՈՒԽ 2 «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Հասարակագիտություն առարկան արդի աշխարհում կարևոր ու մարդուն ուսումնասիրող միակ գիտությունն է: Որպես հասարակական գիտություն այն ուսումնասիրում է մարդուն, հասարակական, բարոյական, իրավական արժեքները: Մարդու մոտ ձևավորվում է ազատ կարծիքն արտահայտելու, պատասխանատվության զգացում սեփական անձի, պետության ու հասարակության հանդեպ:

Այս գաղափարական արժեքները ուսումնասիրելու և զարգացնելու համար ուսուցիչը կիրառում է բազում մեթոդներ, ինչպես բանավեճ, խմբային աշխատանք, Վենի դիագրամը, ԳՈՒՍ մեթոդը, Տ-աձև, Մ-աձև աղյուսակներ, մտագրոհ և այլն:

Ավագ դպրոցում ուսումնասիրվել և կատարվել է համապատասխան հետազոտություն գրեթե բոլոր բաղադրիչների վերաբերյալ: Աշխատանքները հիմնականում կատարվել են

[27] Տե՛ս **նույն տեղում,** էջ 58-59

գործնական կիրառման ճանապարհով, դրանք ուսումնասիրվել և հավաքագրվել են ուսուցչի ու աշակերտների կողմից, կատարվել են վերլուծություններ, առանձնացվել են դրական ու բացասական, ուժեղ ու թույլ կողմերը: Աշակերտների կողմից արված հետազոտությունները բավականին հետաքրքրաշարժ են, քանի որ դժվար է սեփական անձը գնահատել: Դրա համար արված աշխատանքի արդյունքը զգացվում է, եթե էքսկուրսիաները միտված են կրթությանը, ինքնազարգացմանը, անձնային որակները բարելավելուն:

2.1 Մեթոդների կիրառման ու հետևանքների վերլուծությունը 10, 11 և 12-րդ դասարաններում

Հասարակագիտություն առարկայի շրջանում արված հետազոտություններից մեկը վերաբերում է բանավեճին, որը արվել է 10, 11 և 12-րդ դասարաններում: 10-րդ դասարանում արվել է «Դպրոց հաճախելը պետք է լինի պարտադիր» թեմայով, «Եվրոպական արժեքները չարիք են հասարակության համար» թեմայով: 11-րդ դասարանում կատարվել են հետևյալ թեմաներով՝ «ՀՀ-ում կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ», «ՀՀ-ը առանց ՌԴ-ի չի կարող գոյատևել» թեմաներով: 12-րդ դասարանում՝ «Կլիմայի գլոբալ փոփոխության պատճառը մարդն է» թեմայով:

Բանավեճը ընթացել է «Համաշխարհային դպրոց» ձևաչափով, որը հնարավորություն է տալիս աշակերտներին այլ երկրներում ևս մրցելու կամ որևէ մրցույթի մասնակցելու: Բանավեճի շնորհիվ աշակերտները սկսել են առավել ուշադիր լսել, թիմով աշխատել, սկսել են ավելի լավ ներակայանալ, հետևում են իրենց խոսքին, խոսելաոճին, լավ հարցեր տալու ունակությունը զարգացել է, ավելի հանդուրժող են, կարողանում են ավելի հեշտ կենտրոնանալ և այլ հմտություններ: Ցանկացած բանավեճ, այս բանավեճը ևս ունի հատուկ կառուցվածք, բանավեճում առկա է 2 դիրքորոշում կողմ և դեմ: Բանավեճի ընդհանուր կանոնների մեջ ընդունված է, որ սկզբում ներկայնում է կողմ թիմը, հետո դեմ թիմը: Այս ձևաչափում ընդունված է, որ խոսնակների ելույթների ժամանակ կարող են հարցեր տալ: Սակայն տվյալ խոսնակն ինքն է որոշում թույլ տա, որ մյուս թիմը պատասխանի թե ոչ: Բանավեճի ժամանակ պարտադիր կանոն է

պահպանել էթիկայի կանոնները, լսել իրար ու ամենակարևորը հարցեր տալ հենց այդ պահին, ելույթի ժամանակ:

Համաշխարհային դպրոց ձևաչափ

Կողմ դիրքորոշում /

I խոսնակ: Ելույթի տևողությունը 6 ր.

- Ողջունում և ներկայացնում է թիմին
- Ներկայացնում է թեման և խոսում թեմայի կարևորության/ արդիականության մասին
- Սահմանում է տվյալ թեմայի հիմնական հասկացությունները
- Ներկայացնում է թիմի դիրքորոշումը
- Թվարկում է կողմ դիրքորոշման հիմնական /բոլոր/ պնդումները
- Ներկայացնում է **1-2** պնդում /փաստարկում
- Պատասխանում է ընդդիմախոսների հարցերին ելույթի ընթացքում/նվազագույնը 2 հարց/

II խոսնակ: Ելույթի տևողությունը 6 ր.

- Հիշեցնում է վեճի առարկան և իր պարտականությունները
- Ներկայացնում է հակափաստարկներ՝ հերքելով ընդդիմախոսի ներկայացրած պնդումները/ կառուցողական փաստարկները՝ չմոռանալով սեփական դիրքորոշման մասին:
- Վերականգնում է կողմ թիմի դիրքորոշումը՝

Դեմ դիրքորոշում /

I խոսնակ: Ելույթի տևողությունը 6 ր.

- Ողջունում և ներկայացնում է թիմին
- Համաձայնում է թեմայի հիմնական հասկացությունների սահմանումների հետ կամ առաջադրում այլընտրանքնային տարբերակներ
- Թվարկում է դեմ թիմի առաջադրած բոլոր պնդումները
- Հետևողականորեն հերքում է կողմ թիմի առաջադրած այն պնդումները, որոնք փաստարկվել են /ներկայացնում է թիմի հիմնական հակափաստարկները
- Ներկայացնում է **1-2** պնդում /փաստարկում
- Առանձնացնում էբախվող հիմնական գաղափարները:
- Պատասխանում է ընդդիմախոսների հարցերին ելույթի ընթացքում /նվազագույնը 2 հարց/

II խոսնակ: Ելույթի տևողությունը 6ր.

- Հիշեցնում է վեճի առարկան և իր պարտականությունները
- Ներկայացնում է հակափաստարկներ՝ հերքելով ընդդիմախոսի ներկայացրած պնդումները/ կառուցողական

անհրաժեշտության դեպքում բերելով նոր ապացույցներ, օրինակներ՝ ամրապնդելու համար նախկինում հնչեցրած պնդումները

- Ներկայացնում է կողմ դիրքորոշման թվարկած մնացած պնդումները/փաստարկում
- Պարզաբանում է թիմերի մոտեցումների հիմնական

տարաձայնությունները

- Առանձնացնում է բախվող հիմնական գաղափարները:
- Պատասխանում է ընդդիմախոսների հարցերին ելույթի ընթաքում

III խոսնակ: Ելույթի տևողությունը 6 ր.

- Պատասխանում է ընդդիմախոսի փաստարկներին
- Անդրադառնում է նախկին փուլերի փաստարկներին և հիմնական հարցերին
- Վերականգնում է կողմ թիմի դիրքորոշումը՝ նշելով հիմնական պնդումները և բերելով նոր, լրացուցիչ ապացույցներ, օրինակներ՝ ամրապնդելու համար նախկինում հնչեցրած պնդումները
- Ամփոփում է կողմ թիմի դիրքորոշումը:
- Պատասխանում է ընդդիմախոսների հարցերին:

IV խոսնակ: Ելույթի տևողությունը 3ր.

փաստարկները՝ չմոռանալով սեփական դիրքորոշման մասին:

- Վերականգնում է դեմ թիմի դիրքորոշումը՝ անհրաժեշտության դեպքում բերելով նոր ապացույցներ, օրինակներ՝ ամրապնդելու համար նախկինում հնչեցրած պնդումները
- Ներկայացնում է դեմ դիրքորոշման թվարկած մնացած պնդումները/փաստարկում
- Պարզաբանում է թիմերի մոտեցումների հիմնական տարաձայնությունները
- Առանձնացնում է բախվող հիմնական գաղափարները:
- Պատասխանում է ընդդիմախոսների հարցերին ելույթի ընթաքում

III խոսնակ: Ելույթի տևողությունը 6 ր.

- Պատասխանում է ընդդիմախոսի փաստարկներին
- Անդրադառնում է նախկին փուլերի փաստարկներին և հիմնական հարցերին
- Վերականգնում է կողմ թիմի դիրքորոշումը՝ նշելով հիմնական պնդումները և բերելով նոր, լրացուցիչ ապացույցներ, օրինակներ՝ ամրապնդելու համար նախկինում հնչեցրած պնդումները
- Ամփոփում է դեմ թիմի դիրքորոշումը:
- Պատասխանում է ընդդիմախոսների հարցերին

IV խոսնակ:Ելույթի տևողությունը 3ր.

- Վեր է լուծում բանավեճը
- Անդրադառնում է նախկին փուլերի փաստարկներին և հիմնական հարցերին
- Թիմերի որդեգրած դիրքորոշումների համեմատական վերլուծություն է կատարում՝ առանձնացնելով բանավեճի ընթացքում բախումների կետերը՝ ցուցադրելով սեփական թիմի ուժեղ կողմերը
- Բացատրում է իր թիմի կողմիցներկայացված պնդումների / փաստարկների առավելությունները
- Ամփոփում է խաղը

- Վեր է լուծում բանավեճը
- Անդրադառնում է նախկին փուլերի փաստարկներին և հիմնական հարցերին
- Թիմերի որդեգրած դիրքորոշումների համեմատական վերլուծություն է կատարում՝ առանձնացնելով բանավեճի ընթացքում բախումների կետերը՝ ցուցադրելով սեփական թիմի ուժեղ կողմերը
- Բացատրում է իր թիմի կողմիցներկայացված պնդումների / փաստարկների առավելությունները
- Ամփոփում է խաղը

Բացի բուն խաղից նաև տրվում է գնահատականներ, որոնք արվում են դատարոների կողմից: Այսինքն, որ թիմն է հաղթողը երևում է նրանց լավ պատրաստված ու տեղում հեշտ կողմնորոշվելուց:

Բանավեճի գնահատման սանդղակ

Դիրքորոշում	Կառուցողական ելույթ	Անդրադարձ		Եզրափակիչ
1-5 բալ	1-ին խոսնակ	2-րդ խոսնակ	3-րդ խոսնակ	4-րդ խոսնակ
ԿՈՂՄ	-	-	-	-
ԴԵՄ	-	-	-	-

Բացի բանավեճից նաև կազմակերպել են բազմաթիվ դասեր, որոնք պարունակել են ՏՀՏ հմտություններ, օրինակ ռոլլիկներ, սահիկաշարեր և այլն: Դրանցից մեկը նվիրված է եղել 11-րդ դասարանի քաղաքագիտության բաժնի «Արդի գաղափարախոսական հոսանքներ» թեմային, որի ժամանակ աշակերտները բաժանված են եղել 4 խմբի: Յուրաքանչյուր խումբ ներկայացրել է իրեն վերաբերող գաղափարախոսությունը, որոնց ներկայացվելուց հետո տրվել է բլից հարցեր: 4 խմբերի ներկայացնելուց հետո յուրաքանչյուր թիմի պատահականության սկզբունքով տրվել է տրամաբանական հարցեր, որոնց պետք է թիմով պատրաստվել և պատասխանել: Հարցին պատրաստվելու համար տրվել է ժամանակ, որպեսզի քննարկվի խմբի, թիմի կողմից: Դրանից հետո թիմերը պատասխանել ու առաջադրանքների համար գնահատվել են:

Բացի դասական դասընթացից աշակերտների համար կազմակերպել է ուսուցողական, ճանաչողական այցեր Ազգային ժողով, Կենտրոնական բանկ, թանգարաններ ու էքսկուրսիաներ քաղաքից դուրս, որոնք եղել են նպատակադրված:

10-րդ դասարաններում բավականին հաջողված արդյունքներ են գրանցվել հոգեբանություն բաժնում: Կատարվել էին թեմաներին վերաբերող հոգեբանական թեստեր ու վարժություններ: Զգայարաններ թեմայի շրջանակում կատարվել է շոշափելիքի, առարկաները ճանաչելուն ուղղված վարժություններ, իսկ խառնվածք թեմայի շրջանաում համապատասխան թեստեր: Բավականին արդյունավետ էր Այզենկի թեստը, որը բաղկացած է 57 հարցից, սրա առավելությունը աշակերտների խառնվածքի բացահայտումն է: Դրանից հետո ըստ պատասխանների կատարվում է վերլուծություն, որոշվում աշակերտների խառնվածքը, նյարդային համակարգը:

Խառնվածք

	Սանգվինիկ	**Խոլերիկ**	**Ֆլեգմատիկ**	**Մելանխոլիկ**
Էքստրովերսիա	էքստրովեր	էքստրովեր	ինտրովերտ	ինտրովերտ
Նյարդային համակարգ	կայուն	անկայուն	կայուն	անկայուն

Այս թեստի միջոցով բացահայտվում է աշակերտների հուզական կայուն ու անկայուն լինելը, նրանց բնավորության թաքնված կողմերը, ուժեղ ու թույլ կողմերը:

2.2 Մեթոդների գործնական կիրառման արդյունավետությունը ավագ դպրոցում

Կատարված վերլուծությունները բավականին խորն ու հանգամանալից ձևով են արված: Արդյունքները միանգամից դժվար է տեսնել, բայց մի քանի անգամ կրկնելու դեպքում այն բոլոր որակներն ու հմտությունները ձևավորում է: Բանավեճի լավ ու դրական կողմերը այնքան շատ են ու ստացված, որ դպրոցում գործում է «Բանավեճի խմբակ», որը նպատակամղված է աշակերտների մոտ մի շարք դրական հատկանիշներ ձևավորելուն, բուն բանավեճի թեմայի մասին ծանոթացնելուն, ճիշտ բանավիճել սովորեցնելուն ու միասին ճիշտ աշխատելուն: Աշակերտները սկսում են մոտիվացվել մանավանդ երբ դրական արդյուքներ են ցուցաբերում: Մի կարևոր հանգամանք կա, քանի որ խմբակում ներգրավված են 10, 11, 12-րդ դասարաններից, աշակերտների մոտ առաջանում է մրցակցություն, սկսում են առավել լավ դրսևորել իրենց, աշխատել ու լավ պատրաստվել: Փաստացի բանավեճը մրցակցություն է, և դիմացինին հաղթելու միտումը, նպատակը ուժեղանում է, աշակերտները սկսում են ավելի պատասխանատու դառնալ, քանի որ իրենց պատրաստվելուց է շատ բան կախված:

Առհասարակ հոգեբանական թեստերը նպաստում են աշակերտներին ավելի լավ ճանաչելուն, նրանց անձնային ու թաքնված կողմերը բացահայտելուն: Թեստերը աշակերտների ամենասիրելի աշխատանքերից է, որովհետև անմիջականորեն իրենց հոգե-մարմնական աշխարհին է վերաբերում, իրենց ներսը վերլուծելուն ու ուսումնասիրելուն է վերաբերում: Աշակերտները միշտ դրանցից գոհ են լինում:

Հետաքրքրաշարժ են նաև արտադպրոցական ճանաչողական այցերը պետական մարմիններ կամ էքսկուրսիաներ: Օրինակ 10-րդ դասարանի «Բանկեր» թեմայի շրջանակում այցը Կենտրոնական բանկ բավականին հետաքրքիր ու արդյունավետ էր: Այնտեղ իրենց բացատրվեց թեման, առանձնահատկություններն ու կատարվեց շրջայց ուսումնասիրվեցին թղթադրամներն ու հուշադրամները: Արդյունքում այդ մեկ ժամվա ընթացքում աշակերտները իմացան բանկերի, բանկերի տեսակների, կեղծ թղթադրամները տարբերելու և այլնի մասին գիտելիք: Ստացվում է առաջադրված կամ կիրառվող մեթոդները բավականին արդյունավետ ու հետաքրքրական են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ թեմայի ուսումնասիրության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների:

Հասարկագիտության շրջանակում ուսումնասիրող մեթոդները նպաստում են աշակերտների անձնային ու ուսումնական աճի զարգացմանը, գիտելիքի ստացման ու մի շարք որակների զարգացման: Աշակերտները խորապես ուսումնասիրում են հենց իրենց հուզող հարցերն ու փորձում ստանալ պատասխաներ հենց ուսումնասիրվող մեթոդների շնորհիվ:

10, 11 ու 12-րդ դասարաններում կիրառվող մեթոդներն են՝ բանավեճ, խմբային աշխատանք, վենի դիագրամ, Տ-աձև, Մ-աձև աղյուսակներ, Բլումի ու Անդերսոնի տաքսոնոմիաները, ՈՒԴԱԿ աստիճանակարգ, մտագրոհ, ճանաչողական, ուսուցողական այցերը պետական մարմիններ, ճանաչողական ու դիդակտիկ զննումների նպատակով իրականացվող էքսկուրսիաներ, մետաիմացություն, զրույց, դասախոսություն, հոգեբանական թեստեր, վարժություններ, ԳՈՒՍ, Ֆրայերի մոդել, վարդ-փուշ-բողբոջ, տասը տարի անց, կիսատ նախադասություն և այլն:

Այս մեթոդների կիրառման արդյունքում պարզվեց, որ շատ աշակերտներ թաքցնում են իրենց ունակությունները կամ վախենում են ի ցույց դնել: Օրինակ հոգեբանական թեստերի միջոցով պարզ դարձավ աշակերտների խառնվածքը, բնավորությունն ու հուզականությունը:

Բանավեճը որպես արդի մեթոդ ձևավորում է աշակերտների մոտ քննադատական, ստեղծագործական, վերլուծական ու հետազոտական ունակություններ, սովորեցնում է դիմացինին լսելու, տեղում ճիշտ կողմնորոշվելու ու ինքդ քեզ ներկայացնելու հմտություններ:

Աշխատանքի հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ վերոնշյա մեթոդների կիրառումը տվել է գործնական լուրջ դրական արդյունքներ: Դրանց կիրառումը աշակերտների մոտ առաջացրել է մրցակցություն ու մոտիվացիա ավելին անելու ու սովորելու:

Հետազոտական աշխատանքի շրջանակում ուսումնասիրվել են ինչպես հայ, այնպես է լ արտասահմանյան գրականություն, վեր հանվել կարևոր գաղափարները մանկավարժության, մանկավարժության մեթ կիրառվող մեթոդների ու ճիշտ կիրառման ձևերի մասին:

Թեման արդիական է նախ հասարակագիտություն առարկայի շրջանակում տեղ գտած թեմաների կարևորության տեսանկյունից, իսկ հետո այդ թեմաներին համապատասխան մեթոդների կիրառման տեսանկյունից: Թեման արդիական է, քանի որ ուսումնասիրում է մարդուն ու մարդուն վերաբերող հարցերը, իսկ մեթոդները՝ եղանակներ կամ հնարներ են դրանք տեղ հասցնելու համար:

Ադի աշխարհը ողողված է մի շարք գլոբալ հարցեր պարզաբանելու ու լուծելու համար, հասարակագիտության խնդիրն է այդ ամենը աշակերտներին հաղորդակից դարձնելու, մարդուն ավելի շատ աշխարհին մոտեցնելու համար: Հասարակագիտությունը սովորեցնում է ինչպես սովորել ու ինչ եղանակներ կիրառել զարգանալու ու փոփոխությունները իրեն հարմարացնելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1.Ամիրջանյան Յ., Ա.Ս. Սահակյան, Մանկավարժություն, մանկավարժ, 2005թ.

2. Ամիրջանյան Յ., Ա. Ա. Սահակյան, «Մանկավարժություն», եր., 2004

3. Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Զ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Երևան, Արտագերս, 2017

4. Բաբանսկի Յու. Կ., Մանկավարժություն, 2-րդ մաս, Երևան, Լույս, 1987

5. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Եր., 2020

6. Ղույումչյան Գ.,Մանկավարժություն, 1-ին գիրք Եր., 2005

7. Ղույումչյան Գ.,Մանկավարժություն, 1-ին, 2-րդ գիրք, Եր., 2005

8. Պետրոսյան Հ. Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները, Երևան, 2008

9. Беспалько В. П., Слагаемые педагогической технологии, М.: Педагогика, 1989

10. Зимняя И. А. Педагогическая психология.–2002

11. Крившенко Л. П., Педагогика, учебник, Москва 2005

12. Подласый А.П., “Педагогика” Учеб. для вузов 2 кн. т. I, М., 2002

13. Смирнов С.А. (ред.) Педагогика. Педагогические теории, системы технологии, М. Академия, 2000

14. Щуркова Н. Е. и др., Новые технологии воспитательного процесса, Москва, 1993